

Աշխատանքների ներկայացման ընթացակարգը և վերջնաժամկետը

Խնդրում ենք Ձեր աշխատանքներն ուղարկեք ըստ մրցույթի անվանակարգերի մինչև 2016թ. Օգոստոսի 31-ը էլ. փոստի հետևյալ հասցեով՝ entries@granshan.org

Ցանկացած անձ, ով մասնակցել է տառատեսակի ստեղծմանը, նախագծմանը և տարածմանը, կարող է աշխատանքներ ներկայացնել մրցույթի յուրաքանչյուր անվանակարգում: Կազմկոմիտեի, հանձնաժողովի անդամներն ու էքսպերտները իրենց աշխատանքները իրավունք չունեն մրցույթին ներկայացնելու:

Վճարման կարգը

Առաջին հիմնական անվանակարգում մրցույթին ներկայացված ամեն մի աշխատանքի համար մասնակցության վճարը կազմում է 20€ : 40 €՝ երկրորդ հիմնական անվանակարգը, 60 €՝ երրորդը: Դիզայներները կարող են ներկայացնել աշխատանքները հետևյալ տասը անվանակարգերում՝

Հայկական

Արաբական

Չինական՝ ավանդական և պարզեցված

Կիրիլյան

Հունական

Եբրայական

Հնդկական

Կորեական

Թայիլանական

Եվ բոլոր այլ լեզուների տառատեսակները միայն ազատ ոճի անվանակարգում

Յուրաքանչյուր անվանակարգի համար պարգևատրվելու են համապատասխանաբար երեք մրցանակներով: Ինչպես նաև՝ «Գրանշան 2016» -ի գլխավոր մրցանակ, որը ներառում է նաև 1000 €: Հաղթողների աշխատանքի տպագրված տարբերակները կհրատարակվեն Մյունխենի Տպագրական Միություն կողմից ձևավորված նյութերում: Հաղթողները կհայտարարվեն Երևանում՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի մամլո ասուլիսի ժամանակ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Էդիկ Ղաբուզյանին հետևյալ հասցեով՝ edik@granshan.org

Մասնակցության պայմաններն ու անվանակարգերը

«Գրանշան 2016» մրցույթին կարող են մասնակցել տառաստեղծներ ամբողջ աշխարհից : Կընդունվեն այն տառատեսակները, որոնք ստեղծվել և թվայնացվել են 2014թ.-ից հետո և համապատասխանում են մրցույթի պահանջներին: Բոլոր աշխատանքները պետք է

համապատասխանեն Unicode կոդավորման համապատասխան լեզվական համակարգի պահանջներին:

Աշխատանքները կարելի է ներկայացնել հետևյալ անվանակարգերում.

Առաջին նոր հիմնական անվանակարգ՝ ոչ լատինական

Այս անվանակարգը բացառապես ոչ լատինական լեզվական համակարգերի համար է՝ ոչ լատինական տառատեսակներով: Մասնակիցները պետք է փորձեն տեղեկացնել՝ արդյոք տառատեսակը ստեղծված է մեկ կամ ավելի հետևյալ հնարավոր օգտագործումների համար.

- Տեքստային տառատեսակ
- Վերնագրային տառատեսակ
- Ազատ ոճի տառատեսակ

Մասնակիցները կարող են ներկայացնել տառատեսակները, եթե համապատասխանում են հետևյալ անվանակարգերին:

Աշխատանքները հնարավոր են հետևյալ անվանակարգերում.

- Արաբական (տեքստային, վերնագրային կամ ազատ ոճի)
- Հայական (տեքստային, վերնագրային կամ ազատ ոճի)
- Չինական ավանդական և պարզեցված (տեքստային, վերնագրային կամ ազատ ոճի)
- Կիրիլյան (տեքստային, վերնագրային կամ ազատ ոճի)
- Հունական (տեքստային, վերնագրային կամ ազատ ոճի)
- Եբրայական (տեքստային, վերնագրային կամ ազատ ոճի)
- Հնդկական (տեքստային, վերնագրային կամ ազատ ոճի)
- Կորեական (տեքստային, վերնագրային կամ ազատ ոճի)
- Թայիլանդական (տեքստային, վերնագրային կամ ազատ ոճի)
- Եվ ցանկացած այլ լեզվական համակարգ՝ որպես ազատ ոճի տառատեսակներ

Երկրորդ նոր հիմնական կարգ՝ ոչ լատինական/լատինական

Այս անվանակարգը հատկապես այն տառատեսակների համար է, որոնք ձևավորվել են լատինական և որևէ ոչ լատինական այբուբենների համադրությամբ և որոնք նախատեսված են համակցված օգտագործման համար: Եթե կան մի քանի ոչ լատինական բաղադրիչներ, յուրաքանչյուր համադրություն պետք է ներկայացվի առանձին: Գնահատման գործընթացի ժամանակ մենք առաջին հերթին հաշվի ենք առնելու ոչ լատինական տառատեսակի որակը, այնուհետև նույն չափանիշներով գնահատելու ենք լատինական տարբերակը և վերջնական արդյունքում, գնահատվելու է համակցման որակը:

Երրորդ տր հիմնական կարգ՝ ոչ լատինական բազմաթիվ լեզվական համակարգեր

Այս անվանակարգը նախատեսված է այն տառատեսակների համար, որոնք ունեն անվազն երկու ոչ լատինական բաղադրիչներ և որոնք նախատեսված են միասին գործածելու համար՝ առանց լատինական համակարգի: Նախ մենք կդիտարկենք յուրաքանչյուր այբբենական համակարգի որակը առանձին, իսկ այնուհետև համադրության որակը: Այս անվանակարգում լատինական տառատեսակները չեն դիտարկվելու: Եթե ներկայացված աշխատանքը ներառում է այլ անվանակարգեր, որոնք առաջինում ընդգրկված չեն, ապա Գրանշանին անհրաժեշտ կլինի տեղեկություն հավելված տառատեսակների վերաբերյալ ոչ ուշ, քան 2016 թվականի հուլիսի 1-ը, որպեսզի ապահովվի գնահատման բարձր որակը: (entries@granshan.org)

Խնդրում ենք համոզվել, որ Ձեր ներկայացրած աշխատանքը համապատասխանում է մրցույթի պահանջներին:

- Տառատեսակները կարելի է ներկայացնել առանձին նկարվածքներով կամ ընտանիքով:
- Այն տառատեսակները, որոնք պարունակում են բազմաթիվ այբբենական համակարգեր, կարող են ներկայացվել մի քանի անվանակարգերում: Համապատասխան այբբենական համակարգը հիմք կհանդիսանա ընտրված անվանակարգում աշխատանքը գնահատելու համար: Խնդրում ենք նկատի ունենալ, որ ներկայացվող աշխատանքի ձևավորումը պետք է համապատասխանի ընտրված անվանակարգի պահանջներին: Այսպիսով անհրաժեշտ է ուղարկել առանձին PDF ֆայլեր յուրաքանչյուր անվանակարգի համար: Ինչպես նաև յուրաքանչյուր անվանակարգի համար կգանձվի գումարը:
- Հայկական տառատեսակները ներկայացնելիս պետք է ներառեն հայկական դրամի, հավերժության և հերթական համարի նշանները:
- Չինական տառատեսակները ներկայացնելիս պետք է ներկայացնել այն 200 պարտադիր գրանշանները, որոնք բերված են [200 Chinas Hieroglyphs](#) ֆայլում և անհրաժեշտ են չինարեն տեքստեր մուտքագրելու համար:
- 10-րդ անվանակարգում կարելի է ներկայացնել ազատ ոճի, վերնագրային, ձեռագրային տառատեսակներ կամ զարդանշաններ:

Աշխատանքների ներկայացման ձևը

- Խնդրում ենք լրացնել ձևաթուղթը յուրաքանչյուր աշխատանքի համար (հետևյալ փաստաթղթի առաջին և երկրորդ էջերը)
- Խնդրում ենք ներկայացնել ձեր տառատեսակը PDF ֆայլով՝ հետևելով ձևանմուշի ուղեցույցին:

Եթե ցանկանում եք ներկայացնել լրացուցիչ նյութ Ձեր տառատեսակի վերաբերյալ պետք է ներկայացնել PDF ֆայլերով (A3 արժույթի ձևաչափի (42 x 29,7 սմ):

Համոզվեք, որ Ձեր PDF ֆայլը տպելու ենթակա է, և պաշտպանված չէ գաղտնաբառով, համոզվեք նաև, որ Ձեր ներկայացրած էջերը չեն պարունակում տառատեսակի, հեղինակի ու մասնակցի անունը:

Մենք կտպենք Ձեր աշխատանքը 1200 կետաչափի լազերային տպիչով: Յուրաքանչյուր աշխատանք պետք է պարունակի ոչ ավել, քան 6 էջ: Աշխատանքը պետք է ներկայացնել հետևյալ տեսքով.

- Առաջին էջում պետք է ներկայացվեն համապատասխան անվանակարգի բոլոր գրանշանները հնարավորինս մեծ չափով: Տառատեսակի ընտանիքը ներկայացնելիս պետք է ցուցադրել սովորական(Regular) և թեք կամ շեղ (Italic) նկարվածքները (եթե առկա է)
- Ներկայացնել մեկ էջ տեքստ՝ ընտրված անվանակարգի լեզվով,
- Տառատեսակները ցուցադրել մեծածավալ տեքստի համար նախատեսված տարբեր չափերով:
- Լրացուցիչ էջերը կարող են պարունակել այլ այբենական համակարգերի գրանշաններ՝ տարբեր չափերի, ոճերի և այլն: